

ժգ. Կեր - ԴԿԵ

ԿԵՆ ԶԻՆԵՄԵՐ



ԲԱՆԱԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՐԱՊԵՐՈՅ ԱՄԵՆՈՒՆ ԲԱՄԱՆ
"PANPÈRE"
REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժգ Տարի - ՓԵՏՐՈՒԱՐ 1937 13^{me} Année - Fevrier 1937



Խմբագրական

Ժամանակը ծախու առէք

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Երկնային քաղաքացին

Ասիայի եօթը եկեղեցիները

Վեր. Ա. Օ. Փափազեան

Ենորհաց ծովէն

Տէր Յիսուսէն շնորհք գտայ

Յարուծիւն Ղարիպեան

Կենաց ամուսնութիւն

Նափուէտնի արցունքները

Սերտորուծիւն

Անծանօթ Աստուծոյն

Երջանիկ յոյս

Տէրը չուշացներ Իր խոստումները

Սամուէլ Պ.

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Գ. Գ. Խաչիկեան

Պատանեաց

Խաղաղութեան աղբիւրը

Յամբիկ Փօթաղեան

Դէպ երկնային կեանքը

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը Թէեւ ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնաներին է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը վնասեն եւ ծարաւը կրգգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնութիւն ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ յարանուանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ոչգէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաներթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ Թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով. եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով. —

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով զրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ չմուշաւ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արժնյի՛ր դուն
որ կը բնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Է. 14

Քանզի: ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Ուրեմն ա՛յ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Գանգիստը մտնելու խոտովանքէն որ մեզի մեռացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ժԳ. ՏԱՐԻ

ՓԵՏՐՈՒԱՐ 1957

ԹԻԻ 2



ԺԱՄԱՆԱԿԸ ԾԱԽՈՒ ԱՌԷՔ

Ժամանակը ծախու առէք, վառնզի օրերս չար են: Եփես. Է. 16

Անցեալ տարի, տարեակիդրի առթիւ ընդու-
նած բազմաթիւ շնորհաւորական տոմսերէս մի-
ոյն վրայ ուշագրաւ Ս. Գրական համար մը տպ-
ուած էր: Որովհետեւ մասնաւորապէս ուշադրու-
թիւնս գրուած էր խօսքը, այդ պատճառաւ
ստույժ մէկզի դրի եւ անոր պարունակութեան
վրայ ամբողջ տարրուան ընթացքին յաճախ անդ-
րադարձայ եւ խորհրդածութեանս առարկայ ըրի,
քաջալերուելով, յանդիմանուելով, եւ նոյնիսկ
պատժուելով անկէ: Խօսքը մեր վերնագիրն էր:
Ժամանակը ծախու առէք, վառնզի օրերս
չար են:

Չէի արդիական մը, որ զիս անհանգիստ ը-
նէր, ըսելով թէ՛ մինչդեռ աշխարհս ղէպի գեղե-
ցիկ ժամանակներ կը թաւալի, այս հիմնապաշտ-
ները տոմսերով իսկ զմեզ ծունկի բերել կ'ուզեն:

Չէի նաեւ յետազարամեան մը, որ ըսէի թէ
դեռ շատ ժամանակ ունինք դատաստանի օր-
ուան, ուրիմն այսպիսի վերնագիրներ կրող տոմ-
սեր աննպատակ եւ անտեղի են: Սակայն Տէրո-
ջը գալստեան սպասող մէկն ըլլալովս հանդերձ
այդ համարը առաջին առթիւ գարմանք պատ-
ճառեց ինձ, որովհետեւ առաջին անգամն էր որ
նոր տարուան առթիւ ատանկ անյարմար հա-
մար մը կ'ընդունէի: Բայց ցնցումը միայն մէկ
ակնթարթ տեւած էր, մինչդեռ երկրորդ ակն-
թարթին իմ սիրտս լեցուած էր ուրախութեամբ
եւ նոյն ուրախութիւնը յաճախ նորոգուեցաւ
տարուան ընթացքին՝ ամէն անգամ որ անոր
մասին կը մտածէի: Քանզի սիրելի էր ինձ դիտ-
նալ թէ կար ուրիշ մէկը ինձ շատ սիրելի, որ
հեռու երկրի մէջ գտնուած իր զիտարանէն կը

տեսնէր նոյն ամպերը ինչպէս ես կը տեսնէի:
Նաեւ սիրելի էր դիտնալ թէ ներկայ ժամանակի
օրերուն ամենայարմար անցախօսը կը լսէի որ-
պէս սուր ազդարարութիւն: Ուրեմն ինծի կ'իյ-
նար ժամանակը ծախու առնել, այսինքն զայն
շտհագործել Աստուծոյ փառքին համար, թէ անձ-
նական տեսակէտով եւ թէ ուրիշներու եւ Անոր
ճառալուծեան մէջ: Կը վկայեմ որ այս համա-
րը ինծի շատ պարագաներու մէջ ուսուցիչ
մտրակ մը եղաւ:

Կ'արժէ որ նոյնպէս «Բանբեր»ի ընտանիքը
եթէ նոյնիսկ տարեակիդրն ալ չէ, առնէ այս վը-
կայութիւնը իրեն հետ միասին տարուան շատ
մը պարագաներուն, դժնդակ պայմաններուն,
յոգնեցուցիչ վայրկեաններուն, նոյնիսկ մութ ու
թախճոտ օրերուն համար, որ դեղահատ մը ըլ-
լալ իրեն, կրկին վերականգնելու եւ քաջալեր-
ուած յառաջ երթալու կեանքի փշոտ շաւիղնե-
րէն ղէպի նշանաբանը:

Օրերս չար են — Արդէն Ս. Հոգին Պօղոսը
ներշնչած էր թէ քիչ յետոյ ինքը այս աշխար-
հէն պիտի բաժնուէր, իր մահուամբ ալ Տէրը
փառաւորելու համար ինչպէս կ'արտայայտուի
նոյն ժամանակներուն գրած ուրիշ նամակի մը
մէջ, «Ես արդէն զոհ ըլլալու նուիրուած եմ ու
իմ մեկնելուս ատենը հասեր է» (Բ. Տիմ. Դ. 6):
Բայց այս խօսքը միայն իր անձին վերաբերեց-
նելով չէ որ կը խօսի, հապա Ս. Հոգին իր ձեռ-
քով կը գրէ Եփեսացւոց ինչպէս նաեւ Եփեսացի-
ներէն յետոյ եկող Աստուծոյ եկեղեցիին ամէն
ժամանակներու համար՝ մանաւանդ վերջին ժա-
մանակներուն:



ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ

(ՓԻԼ. Ա. 27-28)

«Միայն թէ Քրիստոսի Աւետարանին ինչպէս կը վայլէ՝ այնպէս վարուեցէք»: Անգլերէն թարգմանութիւն մը կ'ըսէ, «Թող ձեր քաղաքացիութիւնը Քրիստոսի Աւետարանին արժանաւոր ըլլայ»: Մեր կեանքերէն յայտնի ըլլալու է թէ զէպի ո՛ր կը ճամբորդենք: Մեր առօրեայ գործերուն մէջ առած ամէն մէկ քայլը ցուցնելու է թէ երկիրքի թագաւորութեան քաղաքացիներն ենք: Աշխարհի խեղդիչ կամ պաղ մթնոլորտին մէջ շարժելու միջոցին՝ մեր երկնային հայրենիքին մթնոլորտը տարածելու ենք մեր շուրջը: Աւելի ազատ շունչ առնելու են այն ամէնը՝ որոնց կը մօտենանք: Անոնց սիրտերն ու խիղճերը արթննալու եւ այնպէս զգալու են թէ իրենց հայրենիքին օղբ կը շնչեն: Մեր յարաբերութեանց մէջ երեւնալու է այնպիսի զուարթութիւն մը եւ աշխոյժ մը որ տեսնուի թէ ինչ մեծ ցնծութեամբ կը վայելենք Աստուծոյ քաղաքին առանձնաշնորհումները եւ օրհնութիւնները: Տէրոջը փրկեալները գերիներու նման քայլու չեն: Գերիներու՝ որոնք երկիւղի մութ դրոշմը կը կրեն իրենց զէմքերուն վրայ, վախնալով թէ յանկարծ խարազանի հարուածներ պիտի տեղան իրենց ուսերուն վրայ կամ ահաւելի անդունդ մը պիտի բացուի իրենց ոտքերուն քով: Աշխարհի հետ ունեցած մեր ամէն մէկ յարաբերութիւնը «Քրիստոսի Աւետարանին վայել» ըլլալու է: Եւ քանի որ այդ Աւետարանը լոյսի, կեանքի, զօրութեան եւ խաղաղութեան աւետիս մըն է, մեր հոգիները լուսաւորուած, կենդանացած, ոգևորուած եւ անդորր փառքով ցնծուն երեւոյթ մը կրելու են: Սակայն որչափ յաճախ Տէրոջը աշակերտները Անոր շնորհքին ողորմիչ յայտարարութիւններն են միայն: Քանի մը տարի առաջ քաղաքի մը փողոցներէն մէկին վրայ խիստ աղտոտ լապտեր մը տեսայ որմէ ուղեցոյց մը կախուած էր քաղաքին լուսցարաններուն ճամբան ցոյց տալու: Քրիստոնէական եկեղեցիին մէջ ալ ասոր նման երեւոյթներ տեսած ենք: Աւամքուր կեանքեր մաքրութեան ու լոյսի

թագաւորութեան զօրութիւնները կը յայտարարեն եւ աղտոտ զգեստներ Փրկիչը կ'ամչցնեն: Պատգամաւորը պատգամին արժանաւոր չըլլալով՝ պատգամը կը ծաղրուի ու կ'անարգուի: Մեր քաղաքացիութիւնը արժանաւոր ըլլալու է Քրիստոսի Աւետարանին:

«Որպէսզի եթէ կամ ու ձեզ տեսնեմ եւ կամ հեռու ըլլամ...»: Շատ մը քրիստոնէական կան որ կարծես թէ առանց զգայացունց երեւոյթներու չեն կրնար ապրիլ: Երբ մասնաւոր ժողովներ տեղի կ'ունենան, հիանալի կանոնաւորութիւն մը եւ նուիրում մը կ'ը ցուցնեն, բայց երբ մասնաւոր խօսողները իրենց տեղերը կը վերադառնան, բազմութիւնը կը պղտիկնայ, փոքրիկ եկեղեցին ու առօրեայ քարոզիչը կը մնան եւ սովորական քրիստոնէական աշխատութիւնները կը թունան եւ կը գաղջանան ու յաճախ ենթակայ կ'ըլլան քննադատուելու վտանգաւոր ունակութեանց: Պօղոս գիտէր այդ վտանգը, ուրեմն զայն Փիլիպպեցւոց առջեւ կը դնէ: Երանի, երեւակ երանի այն քրիստոնէային որ կարող է հանդարտ առօրեայ կեանք մը ապրիլ, հաւատարիմ կեանք մը առանց զգայացունց երեւոյթներու: Կեանք մը՝ մարդկային խոնարհ ընկերակցութեամբ եւ անուշ հաղորդակցութեամբ Տէրոջ հետ:

«Ձեր վրայով լսեմ որ դուք հաստատուն կը կենաք մէկ հոգիով»: Ահա ճշմարիտ զինուորին փառքը: Խնդիր չէ թէ զինուոր մը կարգ մը զինուորակիցներու հետ պահուելով լսէ զինուորական նուագը ու նոր կորովով համակուի, կամ թէ առանձին պահակ կենայ գիշերուան լուռ ու ցուրտ պահերուն, անոր փառքն է հաստատուն կենալ եւ իր դիրքը պահել: Մեր պաշտօնները կը ան բազմաթիւ եւ այլազան ըլլալ: Եթէ մեզմէ իւրաքանչիւրը իր անկիւնը պահպանէ, կարող կ'ըլլանք էմանուէլի երկիրը պահել: Մեզմէ ամէն մէկը ուր որ դրուած է, ճիշդ հոն է իրեն համար պատերազմի ճակատը եւ հոն կըրնայ տանիլ իր առաջին յաղթանակը: Թող հանգիստ, հանգիստ չպառկինք մեր պաշտօնին վրայ, ոչ ալ անփոյթ թափափինք, երբ պատերազմակիցներ կը մեկնին կամ աչքառու աշակերտ մը՝ որուն յենած էինք, մեզմէ կը հեռանայ: Չանարգենք մեր պաշտօնը, ոչ ալ զայն թեթեւ առնելով անհոգ գտնուինք՝ խորհելով թէ աւելի տկար մարդիկ կրնային կատարել զայն, այլ մեր ամենալաւ ուժերն ու մէթոտները

գործածենք: Մեր բաժինն է մեզի ինկած փոքրիկ հողամասը պաշտպանել, հաստատուն կենալ եւ Աստուծոյ օգնութեամբ նայիլ որ Անոր ամբողջ թագաւորութիւնը չվտանգուի մեր զիրքերուն մէջ յառաջ եկած խրամատներով, այլ թշնամին մեր վրայ յարձակած պահուն աեանէ թէ անպարտելի ժայռի մը վրայ կը վատնէ իր ուժերը:

«Ու մէկ շունչով պատերազմակից կ'ըլլաք Աւետարանին հաւատքին համար»: Նոյնիսկ երբոր երբեմն մեզի կը թուի թէ հեռաւոր ու աննշան զիրքերու վրայ՝ առանձին կը պատերազմինք, զիտնալու ենք թէ ահագին ու դժուար բանակի մը մէկ մասը կը կազմենք, վառուած միեւնոյն ազնիւ սիրոյն կրակէն, մղուած միեւնոյն փառաւոր ու կիզիչ բաղձանքներուն եռանդէն, տարուած միեւնոյն հաւատքով պատերազմելու սրբազան ձեռնարկէն: Ոչ ոք կարող է բոլորովին ոչնչացնել ու քանդել Աւետարանին զօրութիւնը: Մարդիկ կրնան զայն ծայրատել ու տկարացնել, սակայն չեն կրնար անոր կեանքը ունել: Անմաքուր հոգիով ու իր Տէրոջը անհաւատարիմ քարոզիչ մը անկարող է իր բերած պատգամը բոլորովին անկենդան դարձնել: «Իմ խօսքս Խնձի պարապ պիտի չդառնայ»: Սակայն այն քարոզիչը որ իր բերած պատգամին հետ համերաշխութեամբ կ'աշխատի, հրաշալիօրէն աշակցած կ'ըլլայ անոր: Կարծես թէ զոյգ մը քաջ պատերազմիկներ միացեալ ջանքերով կ'աշխատին միեւնոյն գործին վրայ ու մէկը միւսը կ'ողակորէ քաջալերիչ բացազանչութիւններով: Մեզի համար առանձնաշնորհում մը եւ պատիւ մըն է Աստուծոյ գործակիցներն ըլլալ ու այս վեհ հաղորդակցութեան միջոցով կը մտնենք Տէրոջը ուրախութիւնը:

ԱՍԻԱՅԻ ԵՐԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ooo

6.— ՓԻՂԱՂԵՂՓԻԱ Յայտ. Գ. 7-13

(Յ. Տ. 1727 1913 Արթնութեան շրջան)

Սարգիկէի մօտ բազմամարդ, առեւտրական կեդրոն մըն էր Փիղաղեղփիա, ներկայիս Ալաշէհի:

Եկեղեցին կը բաղկանար աղքատ եւ տղետ դասակարգի անդամներէ, սակայն Տէրոջը շնորհ-

քը վայելող եւ Քրիստոսի վկայութիւնը պահող հաւատարիմ Աստուծոյ զաւակներէ, որոնք թէև իրենց ժամանակի կրօնական կազմակերպութիւններէն քննադատուած ու մերժուած, սակայն Տէրոջմէ ընդունուած ու հաստատուած, պահեցին Աստուծոյ խօսքը եւ դաւանեցան Տէր Յիսուս Քրիստոսը, հ. 8, 10:

Տէր Յիսուս կը յայտնուի այս եկեղեցիին որպէս «Այն Սուրբը» Գործ. Գ. 14, եւ «Այն ձգմարիտը» Ա. Յովհ. Ե. 20, օրհնեալ անուններով: Պիղժ եւ անօրէն շրջանին մէջ միակ Սուրբը եւ մեր Սրբութիւնը զոր աշխարհ կ'ուրանայ եւ ստութեան ու խարդախութեան շրջանին միակ ձըմարիտը զոր աշխարհ կը մերժէ ու կ'ատէ, որ ունի Դաւիթի բանալին, կը քանայ ու մէկը չը կայ որ զոցէ, եւ կը զոցէ ու մէկը չկայ որ քանայ, հ. 7: Խոստացեալ թագաւորութեան Տէրը եւ իշխանը Եսայ. ԻԲ. 22, Ղուկ. Ա. 32, Մատթ. ԺԶ. 19, Յոբ ԺԲ. 14:

Փիղաղեղփիա պատմութեան մէջ կը ցուցնէ արթնութեան շրջանը, այն սքանչելի եւ օրհնեալ զործը որ առկէ 200 տարիներ առաջ բողոքական եկեղեցիին մէջ սկսաւ եւ համաշխարհային արթնութեան պատճառ եղաւ:

Տէրը տեսաւ ճշմարտութեան եւ սրբութեան փառաքովը լեցուն խոնարհ եւ Տէրոջը անուան նախանձախնդիր զաւակներ, որոնցմով սկսաւ իր դործը Յայտ. Գ. 5, 4: Ուէսլի եղբայրներու եւ իրենց հոգեւոր գործակիցներու միջոցով սկսուած արթնութիւնը տարածուեցաւ Անգլիոյ, Ամերիկայի եւ այլ երկիրներու մէջ, միլիոններ դարձի գալով եկեղեցիին վրայ աւելցան Գործ. Բ. 47: Նոր եկեղեցիներ կազմուեցան, աշխարհի ամէն կողմերը միախոնարհելի զրկուեցան, Մեթոտիսթներ, Մորաւեաններ, Փիլիթիէններ եւ այլ հոգեւոր խմբակցութիւններ աշխարհը կրակի տուին: Անոնց առջեւ բաց էր Աւետարանի դուռը Ա. Կոր. ԺԶ. 9, Բ. Կոր. Բ. 12, Գործ. ԺԴ. 26: Թէեւ պաշտօնական եկեղեցիներու կողմէ քննադատուեցան, նոյնիսկ հալածուեցան եւ շատ նախատինքներու ենթարկուեցան այս քիչ մը կարողութիւն ունեցող Աստուծոյ անկեղծ զաւակները, սակայն անոնք մէկ վայրկեան իսկ չմտածեցին ձգել Աւետարանի այդ փրկարար գործը որ կարծես կը խանգարուէր Աստուծոյ միտքը շունեցող անձերու պատճառով:

Արթնութիւնը զարմանալի արագութեամբ տարածուելով շատ արդիւնք բերաւ եւ Տէր Յիսուս Քրիստոսի անունը անգամ մըն ալ փառաւորուեցաւ երկրի ամէն կողմը:

Փիղաղեղփիա կը նշանակէ եղբայրական սէր: Եփեսոս առաջին սէրը ձգած էր զլ. Բ. 4: Փիղաղեղփիո շրջանին այդ սէրը կը վերակենդանանայ: Աւետարանի սիրովը, հոգիներու սիրովը լեցուն Աստուծոյ անկեղծ եւ նուիրուած զաւակները երբ իրենց քիչ մը կարողութիւնը Տէրոջը սեղանին վրայ դրին, Տէրը բացաւ կենդանի խօսքին դուռը, եւ եկեղեցին անգամ մըն ալ վայելեց Պենտեկոստէի առատ օրհնութիւնները, մեռնելու վրայ եղող բաներ հաստատուեցան 4. 2, 8: Տէրոջը Հոգին այս երկու դարերու ընթացքին զարմանալի եւ աշխարհը ապշեցնող գործեր տեսնել տուաւ, Աւետարանի լոյսը տարածուեցաւ ամէն կողմ, շատ մը երկիրներու մէջ գործող եւ ապրող եղբայրակցութիւններ կազմուելով լոյս եւ օրհնութիւն եղան եւ նորանոր ճշմարտութիւններ, մարգարէական պատգամներ շարժեցին ու կենդանացուցին Աստուծոյ եկեղեցին:

Պաշտօնական եկեղեցին ու անուանական քրիստոնէայ գործիչներ, որոնք կը հալածէին եւ կը մերժէին այս եռանդով ու Հոգիով լեցուն Տէրոջը հաւատարիմ զաւակները, ի վերջոյ ճանչըցան եւ ընդունեցին թէ «իրաւցնէ Աստուած անոնց մէջ է» Ա. Կոր. ԺԴ. 23, եւ ստիպուեցան թուլատրել որպէսզի արթնութեան առաջնորդներ գործեն իրենց մէջ եւ Տէրը հոն ալ իր սուրբ անունը փառաւորելով ամենուն ճանչցուց թէ՛ Փիղաղեղփիան սիրած է 4. 9, Հոով. Բ. 29:

Անցաւ Փիղաղեղփիոյ շրջանը, սակայն կ'ապրին Փիղաղեղփեաններ, (փրկուած, սիրով լեցուն, Յիսուսի զաւտեան սպասող հաւատացեալներ) աշխարհի ամէն կողմերը կան արթնութեան պտուղը եղող Աստուծոյ սիրելի զաւակները, այլազան անուններով, սակայն միաբան հոգիով, որոնք հաւատքով ու սիրով լեցուն, հաւատարմութեամբ կը պահեն «համբերութեան խօսքը» հակառակ իրենց քիչ մը կարողութեան, եւ կը սպասեն Փրկչին յայտնուելուն, որ իրենց խոստացած է պահել զիրենք «փորձութեան ժամանակ» մեծ նեղութենէն, Յափշտակութեան օրհնեալ յոյսը եւ խոստումը գոր Տէրը տուած է իր սիրելի Փիղաղեղփիային պիտի բանայ անոր առջեւ զլ. Դ. 1, Ա. Կոր. ԺԵ. 51, 52, Ա. Թեա. Դ. 16, օղին մէջ միանալու իր Փրկչին ու Փեսային, որուն սիրոյն համար նախատուած, չարչարուած, անարգուած, սակայն համբերելով սպասած է:

Տէրը կ'ըսէ, «Ահա ես շուտով կուգամ, ունեցածդ ամուր բռնէ, որպէսզի մէկը չառնէ քու պսակը»: Օրհնեալ գործ մը տեսաւ Փիղաղեղփիա,

իր Տէրոջը գովեստին ու պսակին արժանի, Տէրը գիտէ թէ ինչ մեծ դժուարութիւններ կրնան պատահիլ, անօրէնութեան շատնալուն համար կրնար յաղթութիւնը արատաւորուիլ, սէրը պաղիլ, ուստի կը պատուիրէ «ունեցածը ամուր բռնել»:

Արթնութեան առաջնորդներ՝ հաւատքի մեծ հերոսութեամբ, նոր ճշմարտութիւններ, լոյս եւ յայտնութիւններ ստացան եւ փառաւոր գործ մը շահեցան: Վերջիններուս կը մնայ պահել զայն ու սպասել խոստումին, ազդարարութեան հրամանին Ա. Թեա. Դ. 15-17:

Օրհնեալ եւ փառաւոր խոստումով կը վերջանայ Փիղաղեղփիոյ պատգամը, «Ան որ կը յաղթէ, անիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ եւ անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ, ու իմ Աստուծոյ քաղաքին անունը, այսինքն նոր Երուսաղէմի որ երկինքէն իմ Աստուծմէս կ'իջնէ եւ իմ նոր անունս»:

Ինչպէս Սողոմոնի տաճարին մէջ սիւններ կային Գ. Թագ. Է. 21, նոյնպէս եկեղեցիին, շնորհքի տաճարին մէջ սիւններ կան Ա. Կոր. Գ. 16, Բ. Կոր. 2. 16, Եփես. Բ. 20-22, Ա. Պետ. Բ. 5, Դադ. Բ. 9: Տէրը Սարգիսի փլչելու վրայ եղող եկեղեցին վերաշինելով անոր մէջ դրաւ յաղթական հաւատքի հերոսներ, որպէս ճշմարտութիւնը եւ հաւատքը վեր բռնող սիւններ, որոնց ամէն մէկը նոր ճշմարտութիւն մը եւ հաւատքի նոր գործութիւն մը ի յայտ բերելով Աստուծոյ անուանը տիրացան եւ իրենց անունը յիշուեցաւ ու կը յիշուի այն գործերուն մէջ որոնցմով լուսաւորներու պէս փայլեցան այս աշխարհի վրայ: Արթնութեան եկեղեցին ակնածանքով կը յիշէ Յինգէնտորֆ, Ուէսլի, Հուայթֆիլտ, Ֆինի, Իվլնդ, Միւլլըր, Մուտի, Պութի, Սքաֆիլտ, Սփըրճըն, Թօրիւն, անուններ, որոնց ամէն մէկը Տէրոջը անունը իրենց վրայ ունին, որոնց ապրած կեանքը օրհնութիւն եւ քաջալերութիւն կ'ըլլայ Աստուծոյ զաւակներուն, որոնցմով կը պարծենանք եւ իրենց հաւատքին նմանող կ'ըլլանք: Ասոնք նոր Երուսաղէմի մէջ, իրական եւ ճշմարիտ տաճարին մէջ, որ Աստուած կը կանգնէ եւ ոչ թէ մարդ (Եբր. Ը. 2, Թ. 24) պիտի ըլլան կանգուն սիւններ յաւիտեանս հաստատուն եւ անոնց վրայ գրուած պիտի ըլլայ Յիսուս Քրիստոսի նոր անունը, «Թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց» (Յայտ. ԺԹ. 16, ԻԲ. 4): Ինչպէս անոնք այս աշխարհի վրայ, խաչի շրջանին, մասնակից եղան Անոր չարչարանաց, Անոր մահուան կերպարան-



ՏԵՐ ՅԻՍՈՒՍԷՆ ՇՆՈՐՀԳ

ԳՏԱՅ

Եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր հաւատքը պարտաւ է:

Ա. Կոր. ԺԵ. 17

Ծնած եմ Տիմոթէի Զիմառայ գիւղը 1898ին: Զիս շրջապատողները բոլորն ալ լաւ համարում ունէին վրատ Սոստոս եւ երեկոյ եկեղեցւէն երբեք պակաս չէի ըլլար: Բայց ինչպէս որ կրակին բոցը կանանչ տերեւները կը խամրէ, չար ընկերակցութիւնն ալ այսպէս աղէկ բարքը ապականեց: Տարագրութեան տարիներուն ատեն մը զիս զարմացնող խորհուրդը աս էր թէ Քրիստոս մերն է, մենք զԱյն անդադար կը պաշտենք, ինք ինչպէ՞ս մեզ օտարներուն ձեռքը կը յանձնէ որ անողորմ գրկանքներէ եւ չարչարանքներէ անցնինք: Բայց իմ հոգիիս մասին բնաւ չէի խորհեր: Այս օրերուն մէջ ժամանակ մը Արարկիր որբանոցը մնալէն վերջ, Հալէպէն նստով Մարսէյլ եկայ 1925ին: Հոն փողոցին մէջ մէկը տեսայ որ Ս. Գրքը կը ծախէր: Անրկա ինձ մօտեցաւ եւ ուզեց որ հատ մըն ալ ես գնեմ: Թէեւ չէի ուզեր գնել, բայց զինքը Հմերժեցի, քանի որ ուրիշներ կոշտ խօսքերով կը վնասէին զինքը

.....
քը առնելով, նոյնպէս իր թագաւորութեանը ու փառքին մասնակից, Յիսուս Քրիստոսի օրհնեալ անունն ու կեանքը ստացած յաւիտեանս պիտի թագաւորեն իր գալու ատենը Յայտ. Ա. 9, Եբր. Ժ. 35-39:

Ունի՞ս Փիղաղեղփիոյ կեանքը, Աստուծոյ խօսքին եւ խոստումներուն վստահող հաւատքը, Հոգիին սէրը եւ սիրոյ պտուղը, Ա. Կոր. ԺԳ. փրկութեան վկայութիւնը եւ խաղաղութիւն ու սրբութիւն Եբր. ԺԲ. 14: Աչքերդ վեր վերցուր, ահա Ան շուտով կուգայ, թող քեզ գտնէ անբիծ եւ անարատ Բ. Պետ. Գ. 14, Յայտ. ԻԲ. 20:

Ո՛հ, հոն, օղին մէջ երկրորդ գալստեան, Քեզմով, Քեզի հետ ապրիմ յաւիտեան, Քեզի կ'սպասեն սուրբերդը ամէն, Եկո՛ւր, Տէր Յիսուս, շուտ եկուր: Ամէն:
Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօստ Օպէնիա

եւ կը ցաւէի իր վրայ որ կը մերժէին զինքը: Ուրեմն աւելի կը խղճայի զրաժախին վրայ, քան զի անրկա օրն ի բուն պիտի տոկայ մարդոց կոշտութեանց, բան մը որ աշխատանքէն շատ աւելի դժուար է: Վէպի մը պէս կարգաւորով հասայ Մատթէոսի Աւետարանը, հոն ուր Յուդա Իսկարիովտացին կը մատնէ իր Վարդապետը, Պետրոս կ'ուրանայ Քրիստոսը, իսկ հրեաները անմեղ Աստուածորդին չընդունելով խաչը կը հանեն ծեծելով: Այս հրէական անգթութեան համար հեկեկանքով լացի միանկա եւ կը դատէի զանոնք, թէեւ ես նոյն դատապարտութեան տակ էի: Դեռ չէի գիտեր Տէրոջ փարիսեցւոց ուղղած խօսքը, «Եթէ մեր հայրերուն անզը եղած ըլլայինք, անոնց հետ մարգարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար, ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք թէ անոնց զաւակներն էք»:

Ս. Գրքը մէկ երկուքին ցուցնել ուզեցի, բայց անոնք ինծի շուտ մը պատասխանեցին թէ այս բաներուն շրջանը անցեր է: Պէտք էր որ ես խըմող, ծխող եւ ընկեր ունեցող մէկն ըլլայի: Ասոր վրայ իբրա՞ Ս. Գրքը մէկ կողմ դրի, բայց սըրճարանն ու թղթախաղը աւելի ձանձրոյթ տուին ինծի: Այս շեղ ճամբուն մէջ սխալ նախանձախնդրութիւն մը զիս լեցուց: Աստուածաշունչը միայն ինծի պէս մարդոց համար, բայց ոչ ուրիշներուն: Թող անոնք իրենց զեղխ կեանքին մէջ շարունակեն ապրել: Բայց այս նախանձախնդրութիւնը զիս աւելի կուրցուց եւ լոյսէն զրկեց: Ինծի բոլորովին անծանօթ էր Աստուածաշնչաւան գիտութիւնը, միայն կը խորհէի թէ քրիստոնեայ մըն եմ եւ ոեւէ մէկ ինձ խօսելու չէր հոգեւոր բաներու մասին, ես ամէն բան գիտէի: Անոնք թուրքերուն քարոզելու կրնային երթալ: Այսպէս իմ արդարութեանս վրայ յենելով Աստուծոյ արդարութիւնը անարդեցի եւ ինքզինքս զրկեցի Քրիստոսի սէրէն, հակառակ անոր որ տարիներէ ի վեր խղճի ազատութիւն կը փնտռէի:

Բայց լուսաւորուելէս առաջ խիստ պայքարներ ունեցայ, որոնց մասին կարճաօրո խօսիլ կ'արժէ: Ս. Ժէոմ արուարձանին մէջ եղած միջոցիս, Աստուծոյ զաւակներէն քոյր մը եկաւ մեզ հրաւիրեց որ աղօթքի երթանք: Այս անծանօթ տեղը երթալ իմ կամքիս կէս մը հակառակ էր, բայց գացի աղօթքի: Անկէ յետոյ Մարսէյլի Աւետարանական եկեղեցիին աղօթածոյններուն ալ երթալու վարժուեցայ: Թէեւ Ստանան դժուարութիւններ հանեց հոն երթալէ արդիւնելու համար:

Շատ կը սիրէի քարոզ մտիկ ընելը եւ կ'ուզէի որ աւելի բարձր ուսմունք ունեցողները մտիկ ընեմ: Օր մըն ալ աշնայէս պատահեցաւ որ իմ կեցած թաղիս քարոզիչը պաշտամունքի նայելու եկած էր Սէն Լու, որ ժամ մը քալելով գացած էի քարոզ լսելու: Ներսէս տրտունջ կ'ընէի թէ պարապ տեղը եկայ մինչեւ հոս, բայց երբ քարոզիչը սկսաւ խօսիլ, կը լսէի որ խօսքը ինձ կը թափանցէր: Ինծի աշնայէս եկաւ թէ այս մարդը զիս ժողովարանէն ալ պիտի հեռացնէ: Յանկարծ խորհուրդ մը զիս գրաւեց, եթէ եղբօրը ըսածը շիտակ է, հապա ի՞նչ երեսով պիտի ներկայանամ Անոր առջեւ որ եկեղեցիին Տէրն է եւ ժողովարանէն դուրս ելայ ու ալ չէի կրնար ինքզինքս կառավարել: Երկար քունէ արթնցողի մը պէս եւ կամ ծանր հիւանդութենէ ելողի մը պէս շուտով հօրս քով գացի, բայց չկրցի հինգ վայրկեան իսկ մնալ հոն, հապա անմիջապէս ճամբայ ելայ տուն դառնալու: Ճամբուն մէջ քարոզիչին հանդիպեցայ, մօտենալով բաւական դժուարութեամբ եւ սրտնեղութեամբ ներողութիւն խնդրեցի: Իսկ քարոզիչը կարծես ինծի կարեւորութիւն չտալով Սամուէլ մանուկը օրինակ բերաւ եւ ըսաւ, Տէրոջը գնա: Թէն իրեն բան մը չըսի, բայց շուարած եւ խռոված տուն դարձայ առանց ոեւէ մէկուն բան մը զիտցնելու: Սկսայ շարունակ ծմապահութիւնով աղօթել: Այս վիճակը քառասուն օրի չափ տեւեց: Տիկինս խղճալի վիճակս տեսնելով ինծի համար կ'աղօթէր վասնզի անիկա հաւատացեալ ընտանիքի մը զաւակն էր եւ ապաշխարած: Այս քառասուն օրուայ միջոցին մերթ ընդ մերթ կը կրկնուէր մտքիս մէջ, «Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, քու հաւատքդ պարապ է»:

Եղբայրներէն ոմանք տեսնելով ինձ սպառնացող մեծ վտանգը, աղօթեցին մինչեւ որ զօրութեանց Տէրը անարժանս ընդունեց իմ Տէր Յիսուս Քրիստոսիս խաչովը եւ զիս ազատեց անցեալի բոլոր մեղքերէս ու ոտքերս վէժի վրայ հաստատեց: Եւ ոչ միայն այսչափ, մէկ հատիկ որդիս որ մէկ տարեկանէն սկսեալ ամբողջ չորս տարի բժշկներուն ձեռքը մնացեր էր, բժշկներէն ազատեց: Փառք Անոր անուան որ հիւանդները կը բժշկէ եւ երկրի վրայ մեղքերու թողութիւն կուտայ:

Ապաշխարելէս յետոյ զործեր ունէի կարգադրելիք: Սկսայ մարդոց հանդէպ ունեցած պարտքերս ալ կատարել: Անիրաւութիւն բրած էի Ֆրանսացի բժիշկի մը, անոր դէմ խիստ խօսելով եւ զայն անարգելով իր կնոջ առջեւ: Այդ անի-

րաւութիւնը շիտակեցի: Նոյնն ըրի ուրիշներու, որոնց սրտերը ցաւցուցած էի եւ ցաւցուցած ըլլալ կը կարծէի: Վերջապէս վաճառականութիւնը րածս ատեն ընկերոջս հանդէպ ըրած անիրաւութիւնս խոստովանեցայ ու Տէրը զիս քայլ առ քայլ լուսաւորեց այս պարագաներուն մէջ, աշնայէս որ իմ ուրախութիւնս երթալով աւելի կը զօրանար եւ խաղաղութեան մէջ կը հաստատուէի:

Սխալ մը, որուն մէջ կը գտնուէի իմ անապաշխար վիճակիս մէջ, մատնանիշ ընել կ'ուզեմ, մի գուցէ օգտակար ըլլամ մէկու մը:

Շատ կը նեղուէի ու կը տանջուէի իմ տղիտութեանս եւ քիչ կըթուած ըլլալուս համար: Ինքնիրենս կ'ըսէի, ես ի՞նչ պիտի ըլլամ, ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս, քանի որ կըթուլիւն չունիմ, նոյնիսկ կը պնդէի թէ ապաշխարութիւնը հարուստներու, կըթուածներու եւայլններու համար է, եւ վերջը մեզի պէս կէս դաստիարակուածներունը:

Ճշմարտութեան հասնելու կարօտն էր որ զիս այսպիսի խորհուրդներու կը տանէր, միեւնոյն ժամանակ ճշմարտութիւնը աշնայէս հեռու կ'երեւէր ինծի, ո՛չ, ես կը հեռացնէի զայն ինձմէ իմ երեւակայութիւններու մէջ ու չէի ըմբռնէր Յովհ. Ա. 12, 13-ը, կը խորհէի թէ պէտք է անհասկնալի մնայ ինծի, ու եթէ հասկնալի այդ զաղտնիքը, անոր ոյժը պիտի կոտրէր:

Այս պարագաներուն զիրք մը կը կարգայի, որուն մէջ կ'ըսէր, «Ի՞նչ սրտով պիտի մտնես հոն, որուն ղռները մարգարիտէ ու քաղաքին հրապարակը թափանցիկ ոսկի է. օձին գնա, տես թէ ինչպէս նեղ ծակէ մը անցած ատեն իր հին շապիկը հոն կը թողու»: Խոտվեցայ, բայց լուսաւորուեցայ, տեսայ որ Քրիստոսը ընդունիլ, զԱյն հազնիլ երեւակայական զաղտնիք մը չէ, հապա յօժար եւ գիտակից հնազանդութեան զործ մը:

Իրիկուն մը եկեղեցի գացի աղօթաժողովի: Քարոզիչները փառաբանութեան նոր ձայնի մը կ'սպասէին: Բայց ես հակառակ որ արցունքով կ'աղօթէի որ Տէրը իմ աչքերս բանալ ինչպէս կոյրին աչքերը բացաւ Սելովամի աւագանը զրկելով, սակայն ձայն մը չհանեցի եւ կ'աղաչէի Տէրոջմէն որ ինծի ալ ցուցնէ այն աւագանը որ լուսացուիմ ու տեսնեմ: Այն վայրկեանին աչքերէս թեփի պէս բաներ մը կ'ելլէին եւ ծունկիս վրայ կարգացած Ս. Գրքին վրայ կը թափէին: Յաջորդ առաւօտ, որ էր 24 Մայիս 1935, ժամը 9ին ծունկի գալով աղօթեցի եւ Տէրս Իր օրհն-



ՆԱՓՈԼԻՏՆԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Երեկոյ մը Նափոլիտն եւ ժեներալ Մօնրոլոն առանձին կը դառնուէին Ս. Հեղինէ կղզիին մէջ: Նափոլիտն խօսեցաւ աշնպիսի մեծ գոհունակութեամբ պատարագի մասին, որ ժեներալին զարմանք պատճառեց: Նափոլիտն ժեներալին զարմանքը նշմարել վ ըսաւ, «Երբ ժեներալ էի եւ դահի տէր, շրջապատուած անկրօն մարդոցմով, կը խոստովանիմ որ կ'ամչնայի դաւանիլ կրօնքը», բնաւ քաջութիւն չունէի ըսելու թէ ես քրիստոնեայ մըն եմ: Կրօնքը ինձ համար պարզ ոյժ մըն էր եւ գործիք մը իմ քաղաքականութիւնս դարձնելու: Բայց հիմա տարբեր է իւրնդիրը: Եթէ նեղութեան մէջ իյնայի ու հարկ ըլլար դաւանիլ հաւատքս եւ ըլլալ մարտիրոս մը, պիտի նախընտրէի մեռնիլ քան ուրանալ Քրիստոսը:

Արդ հոս՝ որ միայն ինձի համար կ'ապրիմ, ինչո՞ւ պահեմ համոզումս, կ'ուզեմ քահանայ մը, կ'ուզեմ պատարագ, կ'ուզեմ դաւանիլ այն՝ ինչ

.....

եալ խաղաղութիւնը պարզեւեց անարժանիս եւ իր աստուածային գթութիւնովը ողորմեցաւ ինձի մեղաւորիս ու հիմա իր անունովը մեղքերու թողութիւն եւ խաղաղութիւն ունիմ: Փառք Անոր Սուրբ անուան յաւիտեանս յաւիտենից:

Հիմա լաւ կը հասկնամ վերնագրիս պատասխանը որ ինձի առեղծուած մը կուգար, «Հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, նընջեցեալներուն առաջին պտուղը»: Փառք այս լոյսին համար որ իմ Տէրս եւ իմ Աստուծս ինձի պարգեւեց: Հիացումով աչքս հեղ մը վեր կը տնկեմ եւ կ'ուրախանամ, հեղ մը մեր յարկին վրայ կը նայիմ եւ կ'ուրախանամ, վասնզի հիմա ամէն ժամանակ հոնկէ հոգեբուդիս աղօթքներ կը բարձրանան: Հոգեւոր Երգարանէն 125րդ երգը որուն վարժուեցայ, իմ ամենէն սիրած երգս եղաւ.—

Փրկիչն ցուցուց ողորմութիւն...

Յիսուս Քրիստոսով ձեր նորեկ եղբայրը
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱՐԻՊԵԱՆ

որ կը հաւատամ: Ամէն օր եկեղեցի պիտի երթայի եւ Հպիտի արգիլէի ինձի ընկերանալ ուղղները: Իմ աքսորեալ ու նուաստացեալ կեանքիս միջոցին հոգիիս գեղեցկութիւնը կը բարձրանայ իր Ստեղծիչին: Կ'զգամ Աստուծոյ մօտեանալու պէտքը: Անիկա զիս իրեն կանչելէ առաջ կ'ուզէ զուրս ձգել մարդկային անմտութիւնը:

Արդ, ամէն փառքի եւ պատիւի ոչնչութիւնը անգորութեան եւ խեղճութեան զգացումը, կաթիլ մը արցունք սահեցուցին նախկին մեծ բռնապետին աշտերէն վար: Դիկտատորը լաւ կը զգար թէ Աստուծոյ առջեւ մեծութիւններ կ'անյայտանան:

Լսէ ո՞վ երկիր,

«Ձայն մը ըսաւ, կանչէ, ու անիկա ըսաւ ինչ կանչեմ. ամէն մարմին խոտ է, ու անոր բոլոր վայելչութիւնը դաշտի ծաղիկին պէս է: Խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, երբ անոր վերայ Տէրոջը հովը կը փչէ» Եսայ. Խ. 6-7a:

«Հիմա մտիկ ըրէք դուք որ կ'ըսէք, այսօր կամ վաղը երթանք այս անուն քաղաքը ու հոն տարի մը կենանք, եւ առուտուր ընենք ու վատկինք. (դուք որ վաղը չէք գիտեր, քանզի ինչ է ձեր կեանքը, յիշաւի շոգի մըն է որ քիչ մը ատեն կ'երեւնայ ու անկէ ետքը կ'ոչնչանայ) Յակ. Դ. 13-15a:

«Աղէ հիմա, հարուստներ, լացէք ու ողբացէք այն թշուառութիւններուն համար որոնք ձեր վրայ պիտի գան: Ձեր հարստութիւնը ապակառած է, ու ձեր հանդերձները ցեցի կերակուր եղած: Ձեր ոսկին ու արծաթը ժանդոսած է, եւ անոնց ժանգը ձեզի դէմ վկայ պիտի ըլլայ, ու ձեր մարմինը պիտի ուտէ կրակի պէս. վերջին օրերու համար դանձ դիզեցիք: Ահա ձեր արտերը հնձող բանուորներուն վարձքը զոր ետ պահեցիք՝ կ'աղաղակէ, ու հնձողներուն բողոքը զօրութեանց Տէրոջը ականջներուն հասաւ: Երկրի վրայ փափկութեամբ եւ հեշտութեամբ ապրեցաք, սիրտերնիդ սնուցիք որպէս թէ մորթուելու օրուն համար» Յակ. Ե. 4-5:

«Իրաւցնէ ժողովուրդը խոտ է, խոտը կը չորնայ, ծաղիկը կը թառամի, բայց մեր Աստուծոյն խօսքը յաւիտեան կը մնայ» Եսայ. Խ. 7b 8:

«Եթէ լոյսի մէջ քալենք ինչպէս Անիկա լոյսի մէջ է, իրարու հետ հաղորդութիւն կ'ունենանք, ու Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ» Ա. Յովհ. Ա. 7:



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՄԱՆՈՒ ԱՍՏՈՒԾՈՅՆ

(Գ. ԱՌԱՔ. ԺԷ. 23)

—

Պօղոս առաքեալ Աթէնքի Արիստոքրոտին մէջ կայնած երբ Եպիկուրեան եւ Ստոյկեական փիլիսոփաներուն ու ժողովուրդին կը քարոզէր, աւանդ ըսաւ, «գԱնիկա (այն Աստուածը) զոր դուք չճանչնալով կը սլաշտէք, ես նոյնը ձեզի կը քարոզեմ» (Գ. Առաք. ԺԷ. 23):

Հակառակ քսաներորդ դարու լուսաւորութեան, հակառակ մարդկային 6000 տարուայ պատմութեան եւ մօտ 2000 տարուայ քրիստոնէական եկեղեցիի պատմութեան՝ այսօր թերեւս ամէն ատենէ աւելի շատ են գԱստուած առանց ճանչնալով պաշտողները: Արբահամ ցանկաց Գրիստոսի օրը տեսնել ու տեսաւ եւ ուրախացաւ (Յովհ. Ը. 56), Մովսէս փափաքեցաւ գԱստուած տեսնել (Ելից ԼԳ. 17, 20), Եսայի տեսաւ եւ զոչեց, վա՛յ ինձի, ահա կը կորսուիմ (Եսայ. 2. 1, 5): Դանիէլ տեսաւ եւ Անոր ոտքը ինկաւ մեռելի պէս (Դան. Ժ. 4-9 բաղդ. Յայտ. Ա. 17): Անհրաժեշտ է գԱստուած տեսնել, գԱյն գտնել, գԱյն ճանչնալ եւ այսպէս գԱյն պաշտել Հոգիով եւ ճշմարտութիւնով: Հիմա տեսնենք Աստուծոյ անուններէն մի քանի հատը եւ ջանանք ըմբռնել անոնց իմաստը եւ զօրութիւնը, նաեւ այդ անուններէն իւրաքանչիւրին Աստուծոյ Իր ժողովուրդին տուած ներկայ շնորհքները եւ խոստումները:

Աստուածաշունչը կ'սկսի սա խիստ յատկանշական բառերով. «Սկիզբէն Աստուած»: Երբայեցերէն բնագործին մէջ հոս գործածուած անունը «էլօհիմ» ինքն իր մէջ միացած «յոգնակի»ութիւն մը կը ցուցնէ՝ այսպէսով պարունակելով երբորդութիւնը: Մինչ Ծնդ. Ա. 1ի մէջ գործածուած բայը «ստեղծեց» եզակի է, հ. 26ի մէջ դերանունը «մեր» եւ բայը «ընենք» յոգնակի են: Տես նաեւ Ծննդ. Գ. 22):

էլօհիմ (երբեմն էլ կամ էլահ՝ Ալլահ) անունը կը նշանակէ «Զօրաւորը», Ամենակարող եւ ինքզինքը երդումով մը կապողը, Հաւատարիմը:

Այսպէս Ս. Գրքի առաջին էջէն երբ Աստուած կը ստեղծէ երկինքն ու երկիրը (մարդուն համար) եւ յետոյ մարդը (Իր պատկերին պէս) ինքզինքը կը յայտնէ իբր «Ամենակարող» եւ «Հաւատարիմ»: Եւ երբ քիչ յետոյ մարդը անհաւատարիմ կը գտնուի իր Արարիչին հանդէպ՝ Արարիչը Աստուած հաւատարիմ կը մնայ իր յաւիտենական ծրագրին մէջ եւ անմիջապէս փրկութեան խոստումը կ'ընէ եւ այս անգամ ինքզինքը յայտնելով իբր Տէր Աստուած (Եհովա էլօհիմ) այսինքն Եհովա՝ Փրկիչ, էլօհիմ՝ Ամենակարող եւ Հաւատարիմ օձին գլուխը ջախջախելու, փրկելու եւ մարդը կրկին իր Աստուծոյն կերպարանակից ընելու (Հոով. Ը. 29) (տես նաեւ Բ. Տիմ. Բ. 13, Յակ. Ա. 17, Սաղ. Հէ. 10): Անկէ յետոյ Ս. Գրքը ամբողջ դէպքերով, շուքերով, մարգարէութիւններով, խոստումներով, պատիժներով ու վարձատրութիւններով եւ ուրիշ «շատ մասերով ու շատ կերպերով» (Եբր. Ա. 1) այս ճշմարտութիւնը, այսինքն Աստուծոյ (փրկող ու նաեւ պատժող) ամենակարողութիւնը ի յայտ կը բերէ, որպէսզի ինչպէս «Սկիզբէն Աստուած» է, վախճանն ալ «Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ» (Ա. Կոր. ԺԵ. 28): «Յաւիտենից մինչեւ յաւիտենան Դուն եւս Աստուած» (Սաղ. Դ. 2): Աստուծոյ այս (էլօհիմ) անունը Հին Կտակարանին մէջ մօտ 2500 անգամներ գործածուած է:

Աստուծոյ այս անունով շինուած բարդ անուններէն երեք հատը սերտենք աղօթքով օրհնութեան համար:

1. Էլ-էլիօն—Բարձրեալ Աստուած: Ծննդ. ԺԴ. 18ի մէջ այս անունը առաջին անգամ ըլլալով կը յիշուի և յարակից դէպքերը արդէն կը ցուցնեն Անոր յատկանշական իմաստները: Աբրահամ իր յաղթանակէն դարձին կը հանդիպի Սաղէմի թագաւոր Մելքիսեղեկի... Բարձրեալ Աստուծոյ քահանային, որ Աբրամը կ'օրհնէ «էլ-էլիօն»ի անունով: Այս յայտնութիւնը նահապետին վրայ այնքան խորունկ տպաւորութիւն գործեց որ ոչ միայն անիկա Մելքիսեղեկի «ամենէն տաաւանորդ տուաւ», հապա նաեւ երբ Սողոմի թագաւորը առաջարկեց պատերազմի աւարը, Աբրամի մերժողական պատասխանը երդումով «Եհովա-էլ-էլիօն»ի անունովն է:

ա. Եհովա հեթանոսաց թագաւորի մը «Բարձր. եալ Աստուած» անունով յայտնուած է:

բ. Հեթանոս մը Բարձրեալ Աստուծոյ քահանան է:

գ. Այս անուամբ Աստուած «երկինքի ու երկրի Տէրն է»: Տես նաեւ այս իմաստով Բ. Օրին.

մալուծուած են: Որքան ողբալի է այդպիսինե-
րուն վիճակը: Արդ, Տէրը երկայնամիտ կ'ըլլայ,
որպէսզի մեզմէ մէկը չկորսուի: Ահա աստուածա-
յին երկայնամտութեան առաջին նպատակը, «որ-
պէսզի մէկը չկորսուի»:

Ուրեմն, «ով որ ականջ ունի թող լսէ թէ Հո-
գին ինչ կ'ըսէ, «Եթէ մէկը եղբայր ըսուած՝ պոռ-
նիկ ըլլայ կամ ազահ... կամ նախատող կամ
զինով կամ յափշտակող... այնպիսին Աստուծոյ
թագաւորութիւնը պիտի չժառանգէ» (Ա. Կոր. Ե.
10-11, 2. 9, 10): «Քանզի հոն պղտիկ անմաքրու-
թիւն մը պիտի չմտնէ»: Արդ, զգաստացէք ով
անպատրաստ Աստուծոյ գաւազներ ու մեղք մի
գործէք, չըլլայ որ «այն օրը» գողի մը պէս ձեր
վրայ յարձակի, ու դուք ձգուիք մեղաց քունը
քնացողներուն պէս: «Ուստի Ս. Հոգին մի՛ տրտ-
մեցնէք, որով դուք կ'ընենք փրկութեան օր-
ուան համար»:

Բ. Դարձեալ, եթէ իրաւ «Տէրոջը կամքը այս
է, այսինքն մեր սուրբ ըլլալը», եթէ իրաւ ինչ-
պէս գրուած է «Սրտով անբիծ եղողները պիտի
տեսնեն զԱստուած» ուրեմն Տէրոջը երկայնա-
մտութեան երկրորդ նպատակը մեր սրբութիւնը
ըլլալու է:

Տէրը չուշացնէր իր խոստմունքը, հապա եր-
կայնամիտ կ'ըլլայ, որպէսզի Աստուծոյ ամէն մէկ
գաւազը հասնի կատարեալ մարդ ըլլալու, Քրիս-
տոսի լման հասակին չափը ունենալու: «Որպէս-
զի մեզմէ իւրաքանչիւրը զատ զատ գտնուի ան-
բիծ, անարատ եւ անմեղադրելի իր գալու ատե-
նը: Որպէսզի եկեղեցին հարսի մը պէս պատ-
րաստ գտնուի Փեսան դիմաւորելու «սրբութեան
զարգարանքներով»:

Արդ կը մնայ մեզի «մարմինի ու հոգիի ամէն
պղծութենէ հրաժարելով սրբութիւնը կատարե-
լագործել Աստուծոյ վախովը», վասնզի «ա-
ռանց սրբութեան մէկը պիտի չտեսնէ Տէրը»
(Բ. Կոր. Է. 4, Եբր. ԺԲ. 14, Ա. Յովհ. Գ. 3):

Գ. Դարձեալ հաստատ գիտենք թէ «ամէն ալ
Քրիստոսի ատեանին առջեւ պիտի ներկայա-
նանք...» եւ իւրաքանչիւրս մեր գործերուն ու
աշխատանքին համեմատ պիտի վարձատրուինք
(Ա. Կոր. Ե. 10): Եթէ այսպէս է, ուրեմն Տէրոջը
երկայնամտութիւնը երրորդ նպատակ մը ունի,
այսինքն մեր պտղաբերութիւնը Յովհ. ԺԵ. 8:

Ահա՛ թէ ինչու իրեն թագաւորութիւն առնե-
լու եւ դառնալու համար հեռու երկիր գացող ազ-
նուականը, իր տասը ծառաներուն ըսաւ «Բանե-

ցուցէք այս մնասները մինչեւ ես գամ»: Տէրը Ի-
րեններուն ըսաւ, «Ձեզ զրի որպէսզի դուք եր-
թաք եւ պտուղ բերէք ու ձեր պտուղը մնայ»: Դարձեալ, «Ձեզի գանձեր դիզեցէք երկինքը»: Ուրեմն կը հետեւցնենք թէ՛ ոչ թէ Տէրը իր
խոստմունքը կ'ուշացնէ, հապա մեզի երկայնա-
միտ կ'ըլլայ, որպէսզի յաւիտենականութեան մէջ
մերկ չպատինք: Որպէսզի երկինքի մէջ գանձ
դիզած ըլլանք, մնայուն եւ յաւիտենական գանձ:
Որպէսզի ճշմարիտ Որթին վրայ հաստատուած
կենդանի ճիւղերու պէս՝ պտուղ, աւելի պտուղ և
շատ պտուղ բերենք: Մանաւանդ, որպէսզի երկ-
նային ամբարները ցորենով եւ Աստուծոյ բնա-
կարանները փրկուած անմահ հոգիներով լեց-
նենք:

Բայց եթէ ինքզինքնիս լրջութեամբ քննելու
ըլլանք, մեզմէ քանինե՛ր «տիպուած պիտի ըլ-
լան զխիկոր հեծելու»:

Ինչպէ՞ս երթամ պարապ ձեռքով տեսնել

Փրկիչս ո՛հ այսպէս

Ինչպէ՞ս կրնամ ես համարձակ, դիմաւորել

զինքն այսպէս...

Արդ քանի որ հաշուետուութեան ատեան մը
կայ (Բ. Կոր. Ե. 10), քանի որ վարձատրութեան
օր մը կայ Ա. Կոր. Գ. 13), մանաւանդ քանի որ
մեր գործերն ու աշխատութեանց վարձատրու-
թիւնը մեր ետեւէն պիտի երթան յաւիտեանս
յաւիտենից (Յայտ. ԺԴ. 13), ուրեմն իմաստուն
ըլլանք Աստուծոյ երկայնամտութենէն օգտուելու:
Եւ զործենք: «Գործենք քանի որ լոյս կայ...»: Զըլլայ որ ատեանը կայնած պահուն երբ ամէն
հոգեւոր մշակ գիրկը լեցուն ցորենի խուրձե-
րով Տէրոջը ներկայանայ, մենք անաշխատ եւ
անվաստակ ծառաներու պէս՝ ամօթահար եւ զըլ-
խիկոր կայսինք մեծ բազմութեան առջեւ: Ուս-
տի «Ջանքի մէջ թուլասիրտ չըլլանք, Հոգիով
բորբոքինք ու Տէրոջը ծառայենք մինչեւ որ
Ինք գայ:

Դ. «Որպէսզի մէկը չկորսուի» խօսքը յայտ-
նապէս կ'ենթադրէ որ զէպի կորուստ գացող հո-
գիներ կան, որոնց դարձին կ'սպասէ Տէրը: Երկու
դասակարգի մարդիկ կան, որոնք հաստատապէս
զէպի յաւիտենական կործանում կը վազեն: Ա-
սոնցմէ առաջինը յետադարձ հաւատացեալներու
բազմութիւնն է:

«Ես պիտի երթամ ու իմ տեղս դառնամ, մին-
չեւ որ անոնք իրենց յանցաւոր ըլլալը խոստո-
վանին ու իմ երեսօ փնտռեն...» (Ովս. Ե. 15):
Այս խօսքէն կը հետեւցնենք թէ Տէրոջը երկայն-

տուժեան չորրորդ նպատակը ինկած եւ յետադարձ հաւատացեալներու վերականգնումն է:

«Անկեղծ ապաշխարութեամբ վերստին ծնածներուն ա՛լ կորսուիլ չկայ»ի վարդապետութիւնը թող ձեզ չխաբբալէ ով յետադարձ եղբայրներ: Այդ ուսուցմունքը ձեզի մեղաց քունի եւ կործանումի բարձ մի՛ ընէք: Հակառակ ձեր անկեղծ համոզումին եւ կեղծ ապահովութեանը, տակաւին պիտի կորսուիք եթէ չվերականգնիք: Երբայց ոց տմբողջ թուղթը լուրջ ազդարարութիւն մըն է այս ուղղութեամբ: Բայց ձեզ համոզելու համար կը բաւէ ձեզի առաջարկել Եզեկ. ԺԸ. մանաւանդ Երբ. Գ. գլուխը: Կ'արժէ կարդալ նաեւ Յակ. Ե. 19-20 եւ Երեմ. Բ. 13ը:

Այս ըսելէ վերջ, կը մնայ ինծի յիշեցնել ձեզի Ս. Հոգւոյն յորդորանքը «Միտքդ բեր հիմա ուրիշ որ ինկար և ապաշխարէ... եթէ ոչ...»: «Արթնցիր դուն որ կը քնանաս, եւ կանգնէ մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»: Ուրեմն Տէրոջը քաղցր ըլլալուն համը առնող ո՛վ յետադարձ սիրելիներ, «Այսօր եթէ Անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտտացնէք»:

«Տէրը երկայնամիտ կ'ըլլայ մեզի, որպէսզի մէկը չկորսուի»:

Ե. «Տէրը երկայնամիտ կ'ըլլայ, որպէսզի մէկը չկորսուի» խօսքը անկասկած ամենէն աւելի դեռ բոլորովին անզեղջ եւ անապաշխար մեղաւորներուն յղուած է: «Ապստամբութեան որդիներուն»: Անոնց՝ որոնք կուրօրէն կամ գիտակցօրէն, յիմարութեամբ կամ յամառութեամբ կը շարունակեն կործանման ճամբուն մէջ վազել:

Ով անապաշխարներ, ձեր անմահ հոգի մը ունենալը, ձեր մեղքերուն Աստուծոյ դէմ թշնամութիւն ըլլալը, Աստուծոյ անխուսափելի դատաւարանը եւ անոր հետեւող յաւիտենական տանջանքը, անվիճելի ճշմարտութիւններ են: Բայց նոյնքան անվիճելի ճշմարտութիւն մըն է Աստուծոյ ձեր վրայ ունեցած անճառելի սէրը: Ապացոյց կը փնտռէք: Կարդացէք Աստուծոյ խօսքը, որ միանգամայն ձեր անվերպելի կործանման ազդարարութիւնը եւ Աստուծոյ զմայլելի սիրոյն զրաւականը կուտայ ձեզի (Յովհ. Գ. 16, Հոով. Ե. 6-10, Եսայ. ԾԳ. ամբողջ): Այս բոլորէն վերջ Աստուած՝ Յիսուս Քրիստոսով տառապող հօր մը պէս զրկաբազ առ ձեզ կը փութայ երդումով. «Ես կենդանի եմ կ'ըսէ Տէրը, որ մէկ մեղաւորի մեռելը չեմ ուզեր... որեմն դարձէք եւ ապրեցէք»: Հակառակ որ դուք ամէն ինչ ըրիք որպէսզի կորսուիք, Աստուած ալ ամէն ինչ րաւ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵՍ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅՈՅ ՀԱՒԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

○○○○○—○○○○○

Մասնաւորապէս քեզի կ'ուղղեմ այս յօդուածաշարքը, ո՛վ վտարանդի հայ երիտասարդ բարեկամ: Քեզի, որ կորսնցուցած նիւթական հայրենիքդ, — ազգային գոյութեանդ ամենէն կարեւոր ազդակներէն մին — կորսնցնելու վրայ ես նաեւ բարոյական հայրենիքդ, մայրենի ոսկեղնիկ լեզուդ, ցիղային ընտիր սովորութիւններդ ու առաքինութիւններդ եւ մանաւանդ քրիստոնէական լոյս հաւատքդ ու նկարագիրդ Քեզի, որ բուժելու համար բիւրատու արիւնհոս, կոտորացո՞ղ վէրքերդ, մէկ բժիշկէն միւսին վատար անոնցմէ եւ ոչ միայն քով: Իսկ այժմ շլմորած ու վհատած՝ անդեկ նաւու մը նման յանձնած ես ինքզինքդ ալիքներու քմահաճօքին:

Սթափէ՛: Մօտ են խարակները եւ նաւակ վառուելու վտանգին տակ. մէջքդ պնդէ՛, ոտքի ե՛լ եւ մաքառէ յորձանքին դէմ: Նայէ՛ Անոր, Որու վստահողներուն համար ըսուած է. — «Երիտասարդները անգամ պիտի յոգնին ու թունան, եւ ընտիր կտրիճները բոլորովին պիտի իյնան, բայց Տէրոջը ապաւինողներուն ոյժը պիտի նո»:

.....

որպէսզի փրկուիք: Քանի որ այսպէս է իրականութիւնը, ալ հիմա «ահով ու զոդով ձեր հոգիներուն փրկութիւնը գործեցէք»: «Ապաշխարեցէք եւ ձեզմէ ամէն մէկը թող իր մեղքերէն լուացուի Յիսուս Քրիստոսի արիւնովը»: Արդ, «այսօր եթէ Անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի խտտացնէք», վասնզի «ահա հիմա է բնդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը»:

Արդ, 1937ին համար ալ այսպէս կ'եզրակացնենք թէ. — «Տէրը չուշացներ իր խոստմունքը, ինչպէս ոմանք ուշացուցած կը սեպեն, հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ, վասնզի չուզեր որ մէկը կորսուի, հապա որ ամէնքը ապաշխարանքի դան» Բ. Պետ. Գ. 9:

(վերջ)

ՍՍՄՈՒԷԼ Պ.

բողոքի եւ անոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն, պիտի վազեն ու չթուշնան, պիտի քալեն ու չյողնին» (Եսայ. Խ. 30, 31):

Փորձաքարի զարկ այս խօսքը եւ պիտի զըտնեն որ ընտիր ոսկի է անիկա: Մանաւանդ հաւատա ու հնազանդէ Քրիստոսի, քու հաւատքիդ Առաջնորդին եւ կատարողին, եւ քու ուժերդ պիտի նորոգուին, միտքդ պիտի պայծառանայ աստուածային լուսով, սիրտդ պիտի թրթռայ անսպառ յուսով ու սիրով եւ կամքդ պիտի ըստանայ պողպատեայ տոկունութիւն: Եւ դո՛ւն պիտի կարենաս երկրաւոր կեանքիդ վախճանին յաղթականօրէն երդել, «Բարի պատերազմը պատերազմեցայ, ընթացքը կատարեցի, հաւատքը պահեցի, այսուհետեւ կայ, կը մնայ ինծի արդարութեան պսակը:

Ահա՛ այդ յաղթական հաւատքի ճամբուն մէջ գէթ փոքր չափով մը քեզ խրախուսելու դիտումով՝ Մարտէն սկսեալ «Բանբերի միջոցաւ քեզի պիտի ներկայացնենք Հայուն հաւատքի պատմութենէն մի քանի կարեւոր դէմքեր ու դէպքեր: Կարդա՛ այդ էջերը ու անոնցմէ թելազըրւած՝ ուսումնասիրէ՛ քու հայրերուդ նկարագիրը: Տե՛ս, անոնք ալ քեզի նման տկար էակներ էին եւ ստիպուած էին անհաւասար կռիւ մղել խաւարի ուժերուն դէմ: Քեզի նման անոնք ալ անցան աւերակաց կոյտերու եւ տառապանքի, արցունքի ու արեան ծովերու մէջէն. քայց չյուսալքուեցան, դեկն ու թիակները մէկդի չնետեցին: Հաւատարիմ իրենց աստուածային վսեմ կոչման, մաքառեցան կատաղի ալեաց դէմ. եւ այնքան երկար ատեն, մինչեւ որ ձեռք ձգեցին, պահեցին ու քեզի հասցուցին քու թանկագին զանձնդ, սքանչելի լեզուդ ու գրականութիւնդ, «Թագուհի թարգմանութեանց» Աստուածաշունչդ եւ լուսոյ, յուսոյ ու սիրոյ ակն ու աղբիւրը հանդիսացող քրիստոնէական կրօնդ:

Կարդա՛ եւ տես թէ ի՛նչ զոհողութիւններ յանձն առին անոնք՝ քեզի այս վսեմ ծառայութիւնը մատուցանելու համար: Ո՛չ շլացան ոսկիի փայլէն ու աշխարհային փառքի հրապուրէն, ոչ ալ երկչոտութեամբ խոյս տուին նախատինքէ, հալածանքէ ու տառապանքէ: Այո, անոնցմէ շատեր մարտիրոսուեցան իսկ, բայց մինչեւ ի մահ հաւատարիմ մնացին: Ուստի Ամենակարողին օգնութեամբ անոնց աճիւններէն յարութիւն առաւ հաւատքը, աւելի երիտասարդ ու աւելի կորովի, եւ անոնց արեան կաթիլներէն, իբր կենդանի սերմէ, ծնան սիրոյ եւ յուսոյ նոր գինուորներ, որոնք իրենց կարգին ամենամեծ զոհողութիւններ

րու գնով բարձր պահեցին խաչի փառաւոր դրօշը, մինչեւ մեր օրերը:

Արդ՝ լե՛ւնք մենք զայն վատօրէն: Բաժնը՝ ի՛նք մեր հայրերուն հաւատքէն եւ Քրիստոսէն, ինչպէս ունենք կը թելազրեն մեզի: Բայց ո՞րու երթանք: Սթալինի՞, Հիթլերի՞, Մուսոլինիի՞: Ո՛չ, անոնք միայն քառս կը ստեղծեն, մարդուն խոցոտուած մարմնոյն վրայ նոր վէրքեր կը բանան: Մեր Բժիշկը միայն մէկ Անձ է, Յիսուս Քրիստոս: Միայն Անոր խաչին դրօշին տակ կայ բժշկութիւն, արդարութիւն, խաղաղութիւն, հաւատք, յոյս, սէր եւ կեանք: Ուստի մեր հայրերուն նման գինուորագրուինք այդ դրօշին եւ նոր տարին մեզի համար պիտի ըլլայ յաղթութեան եւ երջանկութեան տարի մը:

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՆՈՅՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ.—

Ասոր ալ ընկերացած է մշուշ մը, ինչպէս յաճախ արեւի արշալոյսին: Շատ կէտեր մութ կը մնան. պատմական ստույգ ապացոյցներ չունինք, թէ որոնք եղած են քրիստոնէութեան առաջին քարոզիչները մեր երկրին մէջ, թէ ինչպիսի ընդունելութիւն գտած է Աւետարանը մեր հայրերուն կողմէ՝ իր մուտքի ատեն եւ թէ ինչպէս իր գոյութիւնը պահած է մեր մէջ մինչեւ Գրիգոր Լուսաւորիչ: Բայց օտար, մանաւանդ հայ, եկեղեցական աւանդութիւնները գէթ մասամբ կը պարզեն մշուշը եւ մեզի իրաւունք կուտան յանգելու հետեւեալ եզրակացութիւններուն.—

Ա. Քրիստոնէութիւնը մուտ գտած է Հայաստանի մէջ հաւանաբար առաջին դարուն երկրորդ կիսուն իսկ: Իրաւ է, մենք կը մերժենք Աբգարի շուրջ հիւսուած աւանդութիւնը: Ոեւէ ատեն Եղեսիոս (Ուրֆա) մեր մայրաքաղաքը եղած է, ոչ ալ ունեցած ենք Աբգար անունով թագաւոր մը: Վաւերական պատմութիւնը մեզի կը յիշէ քոյրովին տարբեր անուններ հայ թագաւորներու, որոնք Քրիստոսէ ետք Ա. դարուն կը գահակալէին Արտաշատի մէջ եւ կը կառավարէին Հայաստանը: Աբգար եղած է ոչ թէ հայոց, հապա ասորի փոքր պետութեան մը, Ոսրոյենիոյ թագաւորներէն մին: Ան ալ ապրած է Յիսուսի ժամանակ ու թղթակցած է Անոր հետ, — ինչպէս մեզի կ'աւանդեն ասորի պատմաբաններ Լարուբնիա ու Եւսեբիոս եւ անոնցմէ առնելով մեր խորհրդացին, — հապա իշխած է երկրորդ դարու կիսուն Եղեսիոյ մէջ եւ ընդունած քրիստոնէութիւնը:

Այսուհանդերձ դեռ հաւանական կը գտնենք

թէ մեր առաջին Լուսաւորիչները եղած են երկու առաքեալներ. —

1. Թաղէոս, որ կը կոչուի նաեւ Ղերեոս, ինչպէս նաեւ սրտոտ Յուդա Յակոբեան (բաղդատէ Մատթ. Ժ. 3, Ղուկ. 2. 16, Գործ. Ա. 13 եւ Յովհ. ԺԴ. 22): Թէեւ վերոյիշեալ համարներէն զատ՝ Սուրբ Գրոց մէջ ուրիշ տեւէ ակնարկութիւն չկայ այս առաքեալին կեանքին ու գործունէութեան նկատմամբ, թէեւ արտաքին աղբիւրներէն ալ պատմական ստոյգ տեղեկութիւններ չունինք անոր մասին, բայց ազգային եւ նոյնիսկ հոռվմէական կաթոլիկ եկեղեցւոյ աւանդութիւններէն թելադրուած՝ կարող ենք բաւական ստույգութեամբ ըսել թէ Թաղէոս-Յուդա ատեն մը քարոզած է Կապադովկիոյ, հիւս. Միջագետքի եւ Պարսկաստանի մէջ եւ ապա անցած Հայաստան՝ Հոս, մասնաւորաբար Արտաշ գաւառին մէջ, Ս. Հոգւոյն գործութեամբ քարոզած է, բժշկութիւններ ըրած ու հրաշքներ գործած՝ եւ շատ հայեր, նոյնիսկ իշխանագուհիներ, հեթանոսութեան խաւարէն Քրիստոսի սքանչելի լոյսին տառչնորդած է՝ սրախողխող ըլլալով հրամանովը Սանատրուկի, որ հաւանաբար Ս. զարու երկրորդ կիսուն Արտաշի կուսակալն էր, բայց ոչ թէ ամբողջ Հայաստանի թագաւորը(1): Այժմ թաղէոս առաքեալի գերեզմանը կը ցուցուի Պարսկահայաստանի Մակու քաղաքին մօտերը, ուր կը գտնուի Ս. Թաղէոսի մայրավանքը:

2. Բարթողոմէոս առաքեալ. — Այս է Հայոց երկրորդ առաքեալը. կը կոչուի նաեւ Նաթանայէլ (Մատթ. Ժ. 3, Գործ. Ա. 13 եւ Յովհ. Ա. 45-51 եւ ԻԱ. 2) Գալիլիայի Կանայ քաղաքէն: Նոյնիսկ Յիսուսի վկայութեամբ Բարթողոմէոս է «Իսրայէլացի մը, որուն ներսիդին նենգութիւն չկայ»: Դարձեալ նա է որ Պետրոսէ իսկ առաջ դաւանած է թէ Յիսուս է «Աստուծոյ Որդին», եւ Իսրայէլի թագաւորը», ուստի կոչուած է «նախադաւան առաքեալ»:

Դժբաղդարար պատմական ուրիշ ստոյգ ծանօթութիւններ չունինք նաեւ մեր այս լուսաւորիչին մասին: Միայն թէ հոս ալ մեզի օգնութեան կը հասնին օտար եւ հայ եկեղեցւոյ աւանդութիւնները, որոնց համաձայն նա Պարթեւաց ու Պարսից քարոզելէ յետոյ մտած է Հայաստան: Հոս աւետարանած է Սիւնիքի, Գողթնի եւ Հէր ու Զարեանդի մէջ եւ մարտիրոսա-

(1) Դիտ. Վաւերական պատմութենէն գիտենք մէկ այդ տարիներուն Հայոց Թագաւորն էր Հայ Արշակուն. եւանց հարստ. Աւանց հիմնադիր Տրդատ Ա.:

ՊԱՏԱՆԵԱՅ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐԸ

Եկէք Ինծի... եւ Ես ձեզ պիտի հանգչեցնեմ:

Մատթ. ԺԱ. 28



Կ'ուզեմ ըսել ինչ որ Տէրը ինծի համար ըրաւ: Ծնած եմ Պուլտուրի Հայրս լուսաւորչական էր, մայրս բողոքական: Ես միշտ կիրականորեալ դպրոց կ'երթայի, բայց ինծի մէկը ապաշխարութեան վրայով խօսած չէր: Այդ բառը լսած ալ չէի: Ե թը տարեկան էի երբ մեր քաղաքէն ելանք ընտանեօք եւ Աթէնք գացինք: 1926ին Յրանսա եկանք Արտէշի նահանգը, յետոյ Բոման: Հոն Յրանսացւոց ժողովարանը կ'երթայի, ֆրանսերէն չգիտնալուս համար շատ չէի հասկնար: Քիչ յետոյ մայրս գործողութիւն եղաւ. շատ ջանք ըրինք որ աղէկնայ. կ'աղօթէինք ալ որ Տէրը բժշկէ մայրս: Իր մարմինին համար կ'աղօթէինք, ոչ թէ հոգիին: Աստուծոյ խօսքը կ'ըսէ, մարմինէն եղողները մարմինին բաները կը փնտռեն. Հակառակ մեր ջանքին, աւելի հիւսնդացաւ եւ բժիշկները մեզի ըսին որ յոյս չկայ: մայրս պիտի մեռնի: Մենք ալ երբ տեսանք որ մարդէ յոյսերնիս կտրուեցաւ, մենք ալ աղօթքի նիւթը փոխեցինք եւ այսպէս կ'աղօթէինք. «Ով Հայր, մայրս դարձի բեր եւ երբ մեռնի ու գիտնամ թէ Բու քովդ պիտի ըլլայ, ալ պիտի չի լամ. ով Տէր, մայրս դժոխք չերթայ»: Այսպէս կ'աղօթէինք ամէնքս ալ: Երեք օր տանջուելէն վերջ մայրս արթնցաւ եւ բոլորովին փոխուած: Առաջ երբ իր մեռնելուն վրայ խօսէին, կուար ըսելով, երեք անշափահաս գաւազներս ուր ձգեմ եւ երթամ: Բայց վերջը մեզ գրկեց, սիրեց եւ ըսաւ, «Ես պիտի երթամ երկինք, 33 տարի այս երկինք պիտի երթամ»: Իր խօսքերուն ամէն մարդ կը զարմանար, բժիշկը, հիւանդապահները եւ իր այցելողները: Դեռ 15 օր ապրեցաւ և ամէն

ցած, — ըստ ոմանց ողջ ողջ քերթուելով, ըստ այլոց խաչուելով Աղրակի (Պաշգաւէի) մէջ, ուր կայ Ս. Բարթողոմէոսի վանքը, ըստ ազգային աւանդութեան շինուած առաքեալին գերեզմանին վրայ:

Գ. Գ. ԽԱՅԿԵԱՆ

մէկս զատ զատ մխիթարեց եւ ըսաւ, դուք քօնթրադ ունիք ապրելու այս աշխարհի վրայ, ուրեմն ինծի համար ինչո՞ւ կուլաք: Մի լաք, Ղովտի կնկան պէս ետեւնիդ մի նայիք: Թէեւ իր ցաւերը նոյնն էին, բայց 15 օր մեզի հետ անտրտունջ ապրեցաւ եւ խաղաղութեամբ մեկնեցաւ... Ասոր համար փառք կուտամ որ մեր նեղութեանը ատեն մեզ լսեց եւ մայրս իր քով տարաւ: Մենք կրկին անմխիթար էինք, որովհետեւ մօրս յանձնուելուն համար աղօթած էինք բայց մինք յանձնուած չէինք: Բօմանի մէջ ժողով սկսաւ առաջին անգամ: Երբ Վահան եղբայր Սահակեանին վկայութիւնը լսեցի զարմացայ թէ ժարդ իր մեղաւոր ըլլալը կ'ըսէ եղեր: Ժողովներուն յաճախելով լսեցի թէ պէտք է որ ապաշխարեմ: Այդ ատեն ահա սրտիս մէջ փափաք մը արթնցաւ առ Աստուած, մանկական հաւատքով կ'աղօթէի: Օր մը մէկը ինծի հարցուց, «Տէրը քու մեղքերդ ներած է»: Ես ալ ըսի, չեմ գիտեր, ինծի համար աղօթէ: Վերջը Մարտէյլ եկանք: Երբեմն աղօթքի կ'երթայի, բայց խաղաղութիւն չունէի: Շատ անգամ կուլայի, բայց այս լացս մայրիկս կորսնցնելէս աւելի մեղքիս պատճառաւ սրտիս անհանգստութեանէն էր, եւ շատ լուրջ պայքարներ կ'անցնէի: Շատ անգամ կը ստիպուէի աղօթքի չերթալ եւ արտում կեանք մը ունէի: Օր մը Քրիստիանոսի ճամբորդութիւնը առի եւ կարգացի մինչեւ այն տեղ երբ Քրիստիանոս Ապոլոնին հետ կը պատերազմի եւ կ'իյնայ, բայց ետքը կ'ելլէ ու կ'ըսէ, «Ով իմ թըշնամիս իմ վրաս մի խնդար, թէեւ ինչամ պիտի կանգնիմ»: Այս խօսքը զիս շատ քաջալերեց եւ պատճառ եղաւ անձնաքննութեան: Օր մը յուսահատած Զորեքաթի զիշերուան աղօթաժողովին գացի թէեւ զիշերը չէի երթար: Այն օրուան նիւթն էր Տէրոջը առջեւ խոնարհիլ: Շատ յուզուած տուն եկայ եւ ըսի, ա՛լ ինծի համար պէտք է որոշեմ այդ՝ կամ ոչ: Ուստի որոշեցի որ Տէրոջը յանձնուիմ իմ բոլոր պարագաներովս: Ծունկի եկայ աղօթեցի եւ զարմանալի խաղաղութիւնով, լեցուեցայ նաեւ ուրախութիւնով: Տէրոջ՝ տուած ուրախութիւնը աշխարհ չի կըրնար տալ: Ամէն բաները բարիի գործակից եղաւ ինձ ապաշխարելէս յետոյ: Ինծի դժուար եկած բաները պատճառ եղան որ ես Տէրոջս աւելի մօտենամ: Թէեւ շատ տկար եմ, բայց ինչ որ ալ ըլլամ, չօրն եմ Յիսուս Քրիստոսով: Շատ անգամ ինձ նայած եմ եւ յուսահատ ըսած եմ, ես հոգեւոր մը չեմ կրնար ըլլալ եւ Աստուծոյ ուղածին պէս ապրիլ, ու տեսայ որ ես չէ որ

պիտի ապրէի, հապա Քրիստոս իմ մէջս եւ ես առանց Ասոր բան մը չեմ կրնար ընել: Պզտիկ փորձառութիւնս այս ցուցուց ինձ թէ եթէ Յիսուսի մէջ չըլլամ եւ Յիսուսի խօսքերն ալ իմ մէջս, ինչ որ ալ ընեմ պարտաւ է: Հիմա իմ փափաքս եւ բոլոր սրտով խնդրածս այս է Տէրոջմէն, որ Յիսուս Քրիստոս իմ կեանքիս ամէնը ըլլայ ամէն բանի մէջ եւ ամէն բանէ վեր: Նաեւ փափաքս է Յիսուսի գալուն համար պատրաստ սպասող զաւակ մը ըլլալ: Կը խնդրեմ «Բանբեր»ի ընտանիքէն որ ինծի համար ալ աղօթեն:

ՅԱՍՄԻԿ ՓՕԹՍԳԵԱՆ

Մարտէյլ

Շար. Խմբագրականի, 18րդ. էջէն,

Նախ հոգեւոր բաներով զբաղելու: Ուրիշներ երբ հոգեւոր գործ մը կ'ընեն, կ'սկսին անձնավստահ ըլլալ ու կը թմրին եւ իրենց նախկին հոգեւոր եռանդը կը փոխուի գիտութեան, սրտի կեանքը կը դառնայ մտքի կեանքի: Անոնք ինքզինքնին բանէ մըն ալ պակաս չեն սեպեր, աղէկ են, բայց անգիտակ են որ Ս. Հոգին կը բացակայի իրենց մէջէն եւ իրենք լող արտաքին կ'ախք մըն են: Այսպէս է իրականութիւնը նաեւ եկեղեցիներու համար: Եկեղեցին երբ իր կոչումը կորսնցնէ, կամ հպարտանայ, հարստանայ, արտաքին կ'ախք մը կը դառնայ եւ կը կորսնցնէ իր գործունէութեան ոյժը:

Ուրեմն ժամանակը ծախու առնենք ով «Բանբեր»ի ընթերցող հաւատացեալներ, մեր կոչումը որոշ գիտնալով Տէր Յիսուսի նուիրուած, Ասոր Ս. Հոգիով վառուած, հրահարուած, մեր առջեւ դրուած պատուական գործը, հոգիները Տէրոջը բերելու, Քրիստոսը ամէն տեղի մէջ թագաւորեցնելու գործը կատարենք: Պատեհութիւն շատ կայ, մեղաւորները կորստեան կը դիմեն, ժպիտ մը հէգն կը փրկէ, անտարբեր մ'անցնիր անկէ: Քու տգէտ դրացիներդ մեղմ կարեկցութեամբ փնտոէ, քանզի Տէրը օր մը գտնոք քեզմէ պիտի պահանջէ:

Ժամանակը ծախու առնենք նաեւ սրբութեան կեանքին մէջ: «Ամէն ով որ այս յոյսը ունի, ինքզինք կը մաքրէ»: Դործենք, բայց նաեւ Աստուծոյ առաքիլութիւններով օժտուած, մեր անձերը մաքրելով Հոգին միջոցաւ, ճշմարտութեանը հնազանդելով, եղբայրսիրութեան մէջ անկեղծ ըլլալով, սուրբ սրտով մէկգմէկ պինդ սի-

րենք: Ասոր համար եղբայրներ աւելի ջանք ւրէք որ ձեր կոչումը ու ընտրութիւնը հաստատէք, վասնզի զայս ընելով բնաւ պիտի չվրիպիք Աստուածային բնութեանը հաղորդ ըլլալու: (Բ. Պետ. Ա. 4-11):

Ժամանակը ծախու առէք երիտասարդներ, վասնզի դուք ուժով էք ու Աստուծոյ խօսքը ձեր մէջ կը բնակի եւ շարին յաղթեցիք:

Ժամանակը ծախու առէք ով մեղաւորներ, ահա Դատաւորը զրանք քով կանգնած է: Մի


գուցէ ալ ո՛ւշ ըլլայ քեզի, մի գուցէ ի գո՛ւր զը՛շ ջառ, մի գուցէ Աստուծոյ հետեւեալ ահաւոր խօսքը իրականանայ քեզի համար, «Ան որ անիրաւութիւն կ'ընէ, ալ անիրաւութիւն թող ընէ, ու ան որ աղտոտ է ալ աղտոտ ըլլայ, եւ ան որ արդար է՝ ալ արդար ըլլայ, եւ ան որ սուրբ է՝ ալ սուրբ ըլլայ: Ահա ես շուտով կուգամ, եւ իմ վարձքս ինձի հետ է, ամէն մէկուն իր զործին համեմատ հատուցանելու»:

Ուրեմն ժամանակը ծախու առ: Յ. Ն. Ղ.

ԵՐԳ ՊԱՏԱՆԵԱՅ ՀԱՐԱՐ ԵՒ ՄԵԾԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ԴԵՊ ԵՐԿՆԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ազատ. Թարգ. Գերմ. Յ. Ն. Ղ.



Դիտ.— Սոյն երգը պատրաստուած է քաղաքիս Սուրբգրասիրաց Պատանի Միութեան համար: Անոնք երգելէ յետոյ երգը կը հրատարակեն «Բանբեր»ի ընթերցողներուն համար ալ: Նոյնպէս կը թելադրեն ուրիշ Պատանի Միութեանց որպէսզի այս զբարթ երգը անոնցն ալ ըլլայ:

1. Ես պիտ ձգտիմ, երկնային տոյն
Փառքին մի միայն,
Եւ վազել համարիլ է ջանքն իմ
Որ լըման շահիմ:
Երբ յոգնիմ կամ թէ կաղամ,
Խոստումն լսեմ, ո՛հ յայնժամ,
Մի վախճար դուն, մի վհատիր,
Տե՛ս մօտդ է քու Տէր:

2. Երբ ելիմ վեր՝ իբր ընտրուած,
Սուրբ պահին դիմաց,
Հոն տեսնեմ թէ ո՛վ զանդաղ է
Գէշ վարձք պիտ առնէ:
Ով մրցի հոս յաղթական,
Պսակն առնէ հոն անթառամ:
Որդ անցաւոր ինչք երկրային
Թող աչքէս չնդին:

3. Օ՛ն եղբարք յուսով լեցուինք մենք
Եւ յառաջ քալենք.
Մենք չենք վախճար մեծ թշնամէն,
Իր դաւէն ամէն,
Ձի մեր Տէրն է պահապան
Եւ իր խօսքն մեզի վահան:
Մինչ Յիսուս մեր Բարեկամ սերտ,
Մենք մէկ շունչ մէկ սիրտ:

4. Տէր Յիսուս մեզ ուղղէ դէպ այն
Վեհ նըշանաւորն:
Ամբարէզ տուր մեր կամքին ոյժ
Որ չըլլանք վատույժ.
Ո՛հ, սրբէ մեր անդամներ
Եւ մաքրէ զզացումներ
Պաղաքերինք սրտով, կեանքով,
Մինչ հասնինք Քու քով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԷ—Հովիւ' (Վեր.) Յ. Ղազարոսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 10 քարոզածողով, 2 r. Philippe de
» 11.30ին աղօթածողով Girard

Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին նոյն տեղը
Սէն ժուլիէն, Լէզ Օլիվ, Ս. Ժէրոմ Ս. Ան-
ժուան եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ

Ս. Միքր. Ալմաստուր բնակարաններու մէջ
Շարաժամիչի աղօթածողովներ

Գ. շր. ժամը 14ին Սէն ժուլիէն
Գ. շր. 20ին քաղաքը 2 r. Philippe de Girard

Ե. շր. ժամը 2ին Ս. Միքր
Ե. շր. ժամը 19ին Սէն ժէրոմ

Ուր. ժամը 2ին Սէն Անժուան
Սէն ԼՈՒՆ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան

Chapelle Evang. Armen. Bd. Escalon St. Loup
Կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնս,
15 30 ին քարոզածողով:

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ.—
Կիր. ժամը 14ին քարոզածողով

ՍԷՆ ԼՈՒԻ—Քարոզիչ Պատ. Ս. Պազգալեան
11 Impasse des Muriers St. Luis

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց
ժ. 10ին աղօթածողով, ժ. 14.30ին քարոզ

Գ. շր. ժամը 20ին Անես, ժողով
Ուր. ժամը 20ին տերտողութիւն

ԼԱ ՍԻՌԹԱ.— Կիր. ժամը 9.30ին աղօթածողով
15 ին քարոզածողով,

Մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը
.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիւ' Վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս
10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—
Կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԷԼԻՄԱՐ.—
Կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:
.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիւ. Բրոֆ. Գ. Գ. Խայկեան
2 r. du Colombier Valence (Drôme)

Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ

ՌԾՄԱՆ.—
Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիւ' Վեր. Ժ. Պարսամեան,
18, Rue du Dr. Rebatel

Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով
5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:
15 ին երիտասարդութիւններու

ժողով (15 օրը անգամ մը):
18 Rue du Dr. Rebatel.

ՏԷՍԻՆ.—
Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՐԻՍ
Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—
Կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—
Կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):
ՍԷՆԹ ԷՐԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Աբրահամեան

60 Rue Richelaudière
Կիր ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République
17ին աղօթածողով

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—
Կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairie մէջ, Justice de la Paix սրահը
.....

ԲԱՐԻՋ—Հովիւ' Պատ. Զ. Բ. Պոտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով
11 Rue Jean Bart Ա յարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. բա-
նախօռ. Թիւն: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Ք. Ը.

37 Rue Tournefort Paris 5 Metro Mouhe
Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով

Ժամը 10ին կիրակնօրեայ դաս
59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՐՎԻԼ.—Քարոզիչ Պատ. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville

Կիր. ժամը 9ին կիր. դպրոց
Կիր. ժամը 10ին պաշտամունք

Rue des Brochets, Alfortville
Երկու կիր. անգամ մը 7.30ին երիւ. խառն ժողով

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

«Բանբեր»ի ընտանեկան աղօթքի օր.—

Անցեալ տարի առաջարկ եղած էր որ «Բանբեր»ի ընտանիքին բոլոր անդամները տարուան մէջ երկու օր յատկացնեն մասնաւորապէս «Բանբեր»ի եւ իրարու համար աղօթելու:

Կ'առաջարկենք Փետրուար 28ի կիրակի օրը յատկացնել այս օրհնեալ դործին, խնդրելով որ Տէրը մեզ մասնաւորապէս օրհնէ եւ զմեզ Ս. Հոգւոյն նոր զօրութիւնովը այցելէ սրբութեան ու Աստուծոյ փառքին համար: Աղօթենք յատկապէս որ Տէրը «Բանբեր»ի եւ մեզմէ իւրաքանչիւրիս անհատական գործունէութիւնը իր հսկողութեան եւ հակակշռին տակ առնէ եւ շատ հոգիներ փրկուին:

.....

Գիտողութիւն դրամական աւաքումներու մասին.—

Հաճեցէք այս մասին կրկին արդաւ թերթիս կողքին երկրորդ էջը: Ամէն երկրի զբաժնէնք ընդունիլ հոս: Կը բաւէ որ Ձեր նամակին մէջ տեղաւորէք Ձեր բաժնեկիւնն ու զրկէք: Անոնք որ մընի օրտըրով կը զրկեն, թող բարեհաճին mandath շնորհին մեր անուան տակ զրել նաեւ C. C. 182,53 Marseille. Ասիկա մեզի գիրութիւն է: Ղրկողներու աւելի գիրութեան համար նիւ Եօրքի շրջանը գտնուողներ հաճին զրկել Mr. K. Jizmedjian, 665 Venderbilt Ave. Brooklyn N. Y.

Պօթընի շրջանը գտնուողները՝

Mr. B. B. Kazarossian, 154 Nichols Ave. Watertown, Mass.

Քալիֆօրնիոյ շրջանը գտնուողներ՝

Rev. A. Z. Yeghoian, 1245 N. Sra Bonita, Pasadena, Calif.

Արծազանգներ «Բանբեր»ի ընտանիքէն.—

ՅԵՇԱՏԱԿԵԼԻ ՕՐ ՄԸ

1935 ԴԵԿՏ. 4

Սոյն գրութիւնը Գեկ.ի Թիւլին քիչ մը ուշ հասնելուն հոս կը հրատարակենք: ԽՍԲ.

Արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ: Մալ. ՃԺԲ. 6

Մինչ կը թեւակոխենք Արշալոյս քոյր Գիտեսանի (Ճիվէլէկեանի) մահուան տարեգարծը, մտքով կը շրջիմ այն երջանիկ օրերուն, որոնց մէջ զԱստուած կը փառաւորէինք Շուշան եւ Արշալոյս քոյրերու հետ Գործ. Բ. 46-47: Հոգիիս քաղցր կուգայ վերջիշել իր թողուցած ազդե-

ցութիւնը անմահանալի անուշ յիշատակներով: Աստուծոյ Հոգին զիս համոզեց որ աւելորդ չէ իր խոնարհ աղախինին լաւ յատկութիւնները անգամ մըն ալ վերյիշելու:

Արշալոյս քոյրը քրոջն Շուշանի ընկերուհին էր: Տարիներով մէկտեղ ապրած էին, իբր քոյր զԱստուած կը փառաւորէին: Երբ Պէյրութէն քովերնին եկալ, նորադարձ մըն էի: Ան զիս քաջալերեց զօրանալու հոգեւոր կեանքիս մէջ: Սուրբ Գիրքէն դուրս այս քրոջ կեանքը կը կարգալի, որովհետեւ ինքը պարզապէս Քրիստոսի մէկ թուղթն էր Բ. Կոր. Գ. 3: Մեր փոքրիկ սենեակը երկրաւոր դրախտ մըն էր, որուն մէջ միաբանութեան աղօթք եւ փառաբանութիւն ամէն օր անուշահոտ խունկի պէս երկինք կը բարձրանար: Սաղ. ՃԼԳ. Տէրոջը գործը յառաջ կ'երթար մեր մէջ Գործ. Ա. 44, Բ. 46-47: Երանի թէ հիմա ալ Տէրոջը փառքը ցոյց տան ամէն անոնք որ իբր Աստուծոյ գաւակներ մէկտեղ կը բնակին: Մեր տունը այցելողին սիրտը կ'ուրախանար: Եթէ հոգիով տկար կամ տխուր մէկը գար, ուրախ սրտով, հոգիով զօրացած կը վերադառնար, որովհետեւ Արշալոյս քոյրը սովոր էր տեղարին հետ մէկ անկիւն քաշուելով ծնրադիրաղօթելու (Պաղ. 2. 4): Երբոր ամուսնացաւ, թէեւ գործը շատ էր, նորէն ծնրադիր աղօթելը չէր ձգեր այցելողին հետ: Ասիկա բուրումնալից վարդենիի ճիւղ մըն էր որ իր շուրջը անուշ հոտ կը բուրէր. Տէրը կտրեց այս ճիւղը որ երկինքի մէջ, սուրբերուն ժողովքին մէջ տնկէ: Գթած ու կարեկից քոյր մըն էր, հոգիներու համար մայրական սէր կը ցուցնէր. սիրաշահող հոգի մը ունէր անապաշխարներու հանդէպ. մոլորեալները ուղղութեան առաջնորդող քոյր մըն էր: Իր մեծ փափաքն էր Աւետարանի լոյսը ուրիշներուն ալ հաղորդել: Եկեղեցիին մէջ բեռ վերցնող սին մըն էր: Ասիկա Քրիստոսի անուշ հոտը կը կրէր: Նեղութեան եւ փորձութեան մէջ Աստուծոյ կ'ապաւինէր: Իր տկարութիւնները շարունակ Յիսուսի խաչին տակ տանող զգաստ եւ խոհեմ քոյր մըն էր: Շուշան քրոջն հետ համաձայն էին Աստուածապաշտութեան առաքինութիւններու մէջ, Աստուած ալ իր նախախնամութեամբ կարգադրեր էր որ երկուքն ալ շատ չանցած յաւիտեանս իրարու միանային հոն փառաւորելու Փրկիչը: Հիմա երկինքը աւելի ցանկալի է, հոն պիտի տեսնեմ Փրկիչս նաեւ սիրելի քոյրերու:

ՍԱԹԵՆԻԿ ԶԱԳՐԵԱՆ

Փոքնո Օպէնաս